

110. ՀԱՐՈՒՍՏԻ ՍՈՒՏ ՈՒ ԱՂՔԸՏԻ ՍՈՒՏ

Հարուստ մարդ մե կրսեր.

— Տարի մե քանի շընկերներով դացինք բոսթան, խիար առանք, փարեն տալու ժամանակ օսկի մե ձեռքես չընկավ կորավ. շատ գաշեցինք, շրգտանք: Օլոր տարին էլման դացինք էդ բոսթան, խիար առանք, չախուն թալի խիար մե կտրեցի, օսկին միջեն չեկավ:

Աղքատ մե գէդ խոսքն լսեց, յառեջ էկավ.

— Օր մե գացի տուն, կնիկս ըսեց. «Շքո՛, տնավեր, ստղուց մե աղ չկա տուն, շուրվա իմ էփի, ալնի ի՞մալ կուտիս»: Յեկա մեծ թևս մը թալի վըր ճիտուն, հեծա, գացի աղհանք, բեռ մե աղ բարձու վրեն, էկա տուն, աղ թալինք մըջ շուրվին, կերանք, բերանսի իրիցավ, ղըռ տաք էր: Իմ էրթալ գալ տաս դախա շըքաշեց:

— Պատուի՛ս, Շքո, պատուի՛ս, հմլա սուտ կէղնի՛, — կըսին լսողներ:

Շքոն ուրին շը կորցու, կրսե.

— Ա՛խպեր, չորի՛ն չէղնի. օսկին խիարի միջեն դեղնա՛, իմ ճես բեռ մե աղ շը կոնա՛ բերե աղհանքից: Էնի հարուստ է՛ ընդրու ըսածն օղորդ է, ես աղքատ իմ՝ իմ ըսած սո՞ւտ է:

